

ՊԵՐԱՏԻ
ԵԺԱՆԱԳԻՆ
ԼՐԱԴԱՐԱՆ

№ 30

№ 3

ՅՈՂԱՆՆԵՍ Ռ. ԲԵԽԵՐ

ԳՈՐԾ ԵԱՐՔԵՐ

ՊԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՊԱՌԻԹՈՐԻ
ՏԵԲԵԼԻՆ

1934

28 JUN 2009
20 OCT 2009

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՂԱՓՈՒԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

83

F-44

ՅԱՆԱՆԵՍ Բ. ԲԵՆԵՐ

պ.

1006
28643

Գ Ո Ր Շ Ն Ա Ր Ք Ե Ր

Բարձր. Սիմոն Բարձրյան



1933

2585

Պատ. խմբագիրը՝ ~~.....~~
Տեխ. խմբագիր՝ Տ. Պաշխանբյան
Լեզվ. խմբ. և սրբ.՝ Վ. Տերոյան
Հանձնված է արտադրության №6 հունիսի 1933
Ստորագրված է ավագրելու 30 սեպտ. 1933

Պետհրատի տպարան, Յերևան
Հրատ. № 2640, Գլավլիտ՝ 8210, (բ), Պատվեր՝ 1736, Տիրույթ՝ 3000

Յ Ո Ղ Ա Ն Ն Ե Ս Ռ. Բ Ե Խ Ե Ր *)

Յոհաննես Բեխերը ծնվել է 1891 թվին, Մլունխեն քաղաքում, դատաստանական մի խոշոր աստիճանավորի ընտանիքում: Նա միջազգային բոլշևիզմի պրոլետարական խոշոր բանաստեղծներից մեկն է:

«Գորշ շաբեք» խորագրերը կրող իր վերջին գրքում, վոր նրա բանաստեղծությունների ժողովածուն է, Բեխերը տալիս է իր մանկության հիշողություններից շատ և շատ տեղեկո՞թյուններ. նա պատմում է իր «մեծ հայրենիքի» մասին, այլ և այն բանի մասին, թե ինչպես ինքը մտել է այս աշխարհը, ինչպես ապրել է բուրժուական գերության մեջ և ինչպես՝ վերջ ի վերջո՝ ազատվել է նրանից, բարձրանալով մինչև պրոլետարական կատարյալ ինքնագիտակցության աստիճանը:

«Ընկեր» բանաստեղծության մեջ նա գրում է. «Յես կարող ելի ապրել տափակ հարկով մի տան մեջ՝ ամբողջ ճակատը — պատշգամբ: Յես կապրելի նրա մեջ՝ ցնորքներիս անձնատուր լեղած և գրելով բանաստեղծություններ, վորոնց մասին ասում են. «Այս հավերժության համար է»: Բայց բանաստեղծը՝ պատերազմից և հեղափոխությունից վերածնված՝ հրաժարվել է բուրժուական այդ խաղաղ կյանքի բոլոր հարմարություններից. «Ասես բենտգենյան հայացքով չես տեսա ամբողջ աշխարհի փտությունը: Յեվ դեն նետեցի

*) Ըստ А. Дежв.-ի.

լես իմ անունը: Ինձ կոչում են «ընկեր»: Յես կանգնեցի Կոմիտեերնի կարմիր դրոշակի տակ»:

Դժվար ու տանջալի չե ստեղծագործական աճումն այն բանաստեղծի, վոր կտրում ե իր կապերը բուրժուական աշխարհայացքի հետ և հարում պրոլետարական հեղափոխության: Յոհաննես Բեխերը իր ստեղծագործական աշխատանքի տամնյոթը տարվա ընթացքում ահագին ճանապարհ ե անցել:

Նրա բանաստեղծությունների առաջին գիրքը լույս ե տեսել 1913 թվին: Մենք տեսնում ենք, վոր այդ գրքի հեղինակը մի թունդ անհատապաշտ ե և նրա ըմբոստությունն անիշխանական բնավորություն ունի. Բեխերի այդ ժամանակվա բանաստեղծությունները տողորված են շղաչնական դժգոհություններ բուրժուական իրականությունից: Բանաստեղծն ուզում ե, վոր իրան շրջակայտող աշխարհը կործանվի, բայց նա իր իսկական թշնամուն չե տեսնում: Ինչպես արմատական ինտելիգենտներից շատերը՝ նա չեք ե փնտռում միատիցիզմի, կրոնի, աստվածփնտռության մեջ:

Ազգերի չեղբայրության իր չեքաները նա արտահայտում ե այնպիսի ձեերով, վորոնք դեռ հեռու չեն իրականությունը հեղափոխականորեն հասկանալուց: Նա արդեն այն ժամանակ համարում ե բանաստեղծին մասսաների կազմակերպիչ, թեև կոչում ե նրան «աստուծո զինվոր», վոր վերին պատվերներն ե կատարում: Պաշտոնական կրոնի հետ ունեցած իր կապերը Բեխերը կտրում ե շատ առաջ, քան աստվածփնտռության միատիքական մոտիվներից ազատվելը:

Պատերազմը Բեխերի վրա մեծ ազդեցություն գործեց և ոգնեց նրան՝ հրաժարվելու բուրժուական շատ ցնորքներից: Գերմանիայի հեղափոխության ալիքի բարձրացումը Բեխերին ել նետեց նրա գագաթի վրա: Նա մտավ մար-

տընչող պրոլետարիատի շարքերը և մնաց իբրև մարտիկ բանվորական դասակարգի գործի համար նույնիսկ այն ժամանակ, չերը գերմանական հեղափոխությունն պարտությունը բերեց բեկցելա և չերը հեղափոխության տաղանդավոր ուղեկիցները մի ամբողջ շարք վոչ թե միայն հեռացավ կովից, այլ ուղղակի հարեց թշնամիներին:

Բեխերը դառնում ե իսկական հեղափոխական բանաստեղծ: 1924 թվին նա գրում ե իր «Լենինի գազադի առաջ» պոեմը. այդ նրա առաջին արտադրությունն ե, վորով նա հանդես ե բերում իրեն՝ իբրև համաշխարհային հեղափոխության վերաստեղծված բանաստեղծ:

Հաջորդ թվին նրա՝ «Իրակը գահի վրա» քնարերգական գիրքը մի դատապարտող պամֆլետ ե՝ ուղղված Հինդենբուրգի կեղծ «դեմոկրատիայի» դեմ:

Այստեղ Բեխերն արդեն վոչ թե «աստուծո զինվոր» ե, այլ քաղաքական ագիտատոր, վոր իր ամբողջ շնորհքը տալիս ե պրոլետարիատի նպատակներին ծառայելուն: Այդ գիրքը գրավեցին և Բեխերին դատի հանձնեցին: Դրանից հետո բուրժուական արդարադատությունը շատ անգամ մեղադրյալի նստարանի վրա դրեց բանաստեղծին, վոր հանգրգանել էր հանդես դալ բուրժուազլայի դեմ սաստիկ կտրուկ լեզվով:

Բեխերի դրած նպատակները՝ բնականաբար՝ միայն այն ժամանակ կարող են իրականանալ կատարելապես, չերը բանաստեղծը հասկանալի լինի միլիոնավոր պրոլետարներին, վորոնց նա դիմում ե: Մրան համապատասխան՝ Բեխերի վոճը պարզ ե ու վճիտ, նրա պատկերները լիարյուն են և վորոշ: Բանաստեղծը շատ առողջ կերպով ոգտըվում ե չափերի, հանդերի և առձանույթների պեսպիսությունից: Նրա «Կուսակցությունը», «Յես չերգում եմ հնգամյակը» և այլ պոեմները մի մի հսկայական պղկատ-

ներ են, վորոնց պրոպագանդիստական գերն առանձնապես ուժեղ է այն պատճառով, վոր նրանք շատ գեղարվեստական են և գրված են միջազգային հսկայական թափով:

Բեխերը միշտ աշխատում է կատարելագործվել իր նոր ճամբին. նա ազանորեն հետևում է պրոլետարիատի հսկայական կռվին՝ կապիտալի յերկրներում և շինարարութեան աճման՝ Խորհուրդների յերկրում: Այստեղից է նրա նյութի անհատանում աղբյուրը, այստեղից է այն հստակ և հերոսական պաթոսը, վորով տոգորված են նրա նորագույն բանաստեղծութունները:

Այս գրքուկով մենք տայիս ենք Յոհաննես Բեխերի լավագույն աշխատութուններից մի քանի բան, վորոնք վերցված են նրա վերջին՝ «Գորշ շաբբեր» ժողովածուից, այլ և նրա «Յես յերգում եմ հնգամյակը» պոեմը: Այս պոեմով Բեխերը կանխեց խորհրդային բանաստեղծներին. նա հնգամյակի մասին գրեց այնպիսի վաղ, քան թե սոցիալիստական շինարարութեան յերկրի պրոլետարիոնները:

Ս. Բ.

Կ ՈՒ Ս Ա Կ Ց ՈՒ Յ ՈՒ Ն Ը

I

Մեր կուսակցությունը: Անդամութեան տոմար
Մենք կրում ենք հպարտ, ինչպես բարոններն իրանց
տխադուր.

Մեզ համար բառը «ընկեր»
Ավելի թանգ է, քան միլիոնավոր մեր անունները:

Ընկեր բառը մեզ հավաքում է,
Նա այնպիսի անքակտելի չէ «դու»-ից,
Նա մետաղի ձայնն է, վոր մեզ հրավիրում է
Խուլ մթութունից,
Այդ բառը ամեն նիզակից սուր է,
Այդ բառը զարթեցնում է քնած հանքերը,
Այդ բառը նաև անտառների վրա չէ սավառնում,
Այդ բառը ծածկում է ժողովներում բոլոր ձայները,
Այդ բառը ամբողջ յերկրագնդի մի ծայրից մյուսն է
անցնում,

Այդ բառը գիտեն բոլոր լեզուները:
Ընկերը կասե ընկերին.
«Ընկեր» — և բառը կփայլի,
Այն բառը, վոր յերկիրները դարձնում է հայրենիք
յերջանկութեան,
Այն բառը, հզոր բառը Խորհրդային իշխանութեան.

Յերբ մենք պառկած ելինք կեղտոտ ուղմախրամ-
ներում՝

Յեվ կովում ելինք՝ խճճվելով փշե թելերում,
Մենք՝ թվում եր՝ ծանոթ չեյինք նեցուկին կյանքի.
Յերբ մեզ վրա կիտվում ելին ամպերը շրապնեհների,—
Գեանի վրա մեր սվիններովը
Նշաններ, նկարներ ելինք գծում ակնապիշ,
Շնչում ելինք գարշահոտ հովը,
Վոր դիակներից եր գալիս:—

Դեմքերս ծածկվում ելին սաղավարտների տակ: Մա-
րում եր լույսը դողդոջ:
Միայն մի միտք եր հնչում մեր ականջներում.
Կարլ Լիբկնեխտը ասաց ուղմական վարկերի համար.—
«Վնչ»:

Այսպես ծնվեց Կուսակցութունը մեր սրտում:

II

Ինչպես վորթեր՝ սպանդանոցից, վարակումից ծնված,
Գարշահոտ գազի քուլաներում մրտաված,
Մենք հանկարծ հասկացանք, մենք ըմբռնեցինք,
Թե ինչի համար չորս տարի տանջվեցինք:

— Իսկ շուրջը — հեռվում՝
Քաղաքների մութը և կործանում,
Յեվ մի ֆրոնտից մյուս ֆրոնտը
Զգվում են բանակները այնտեղ, ուր վառվում է
հորիզոնը:

Մենք ձայն բարձրացրինք: Հերիք է լուր:
Յեվ՝ բացվելով՝ սկսեցին գերեզմանները կանչել:
Մենք թուշում ելինք Բերլինում ուժգին հեղեղի պես,

Յեվ հրացանաձգութունը կուռերներից — տարափի
ձայն ուներ կարծես.

Յեվ քաղաքը՝ այդ կարկուտից դղրդալի՝
Վողջ ցնցվում եր, նման դժոխքի:
Քաղաքի բանվորական մասը լեռաց,
Նա, ով վոր գիտե և՛ ցուրտ, և՛ քաղց,
Քալում է մեզ հետ գորշ սյուններում,
Տասներկուական հոգի մի շարքում,—
Մինչ՝ հրացանագետ՝ լերգոմ են և կանչում
նավաստիները:

«Այս աշխարհը պետք է լինի մերը»:
Ահա բեռնակիր մեքենաները հևում են, և նրանց
մեջ — սվինի վրա՝ սվին,
Յեվ նրանցից մեկի վրա կավիճով գրված է մեծատառ՝
Բ ու Ղ և ի կ:

Յեվ փողոցի կեղտոտ մայթի վրան
Քարերը վեր թռան, ինչպես շատրվան,
Մենք քանդեցինք ցանկապատի տախտակները,
Մենք պատրաստվում ելինք մյուս կողմ նետվելու,
Մենք առաջ ելինք քաշում գնդացիները,
Զրահակիրներն աղմկում ելին անդուլ,
Յեվ ուրախ ելին զարմացած փողոցները —

Պատնեշներ, —
Պատնեշներ են շինվում...

Յերկինքը քարի պես եր կախվում,
Յեվ լերկնքի տակ գորշ
Ապստամբութունը մայրաքաղաքում
Արյամբ եր հաղթում խոչընդոտներին...

Հիստորիկաբար աչքեր են չուում աֆլիշների սյուները.

«Սպարաակյանները վերցրին «Փորվերասը»:

Գաղանորեն սպանված են վաթսուն յերկու

վոստիկան...»

Քաղաքացիներ,

Վոչնչացրեք, սպանեցեք, փոշի դարձրեք սպարտա-

կյաններին»

Ականացիները թքում են պողպատե բեկորներ,

Գնդացիները և՛ չար են, և՛ հեռու նետող,

Զրահապատ մեքենաները դադարեցին հնձել,

— Նոսկեն աչքակես հրամայեց անգող: —

Իսկ գվարդիականները՝

Քարշ տալով Ռոզային և Կարլին՝ դեպի Եգեն-ոթել

տարանք

Սպաները ձեռնոցներ ելին հագնում:

«Ահա Գալիցիացի կինը... լավ նշան դիր նրան»

Կանչում ելին մոլեգին, խինդով,

Յեվ՝ կրակոտ ու վայրենի՝ հուսար Ռունդեն

Հրացանի կոթով

Նրանց խփելու՝ ձեռքը բարձրացրեց արդեն:

Կարլ Լիբեհնխտը գնում է սպանիչների առաջից,

Ահա գնդակն անցավ ուղեղի միջից:

Իսկ Նոսկեն աչք պահին նստած էր հարմար բազկա-

թոռում անհոգ

Յեվ պատմում էր անեկոտ:

Մենք կարդում ելինք. «Փախչելու փորձի միջոցին

սպանված են...»

Յե՛վ ամեն մի կոմունիստ զգաց թռչում...

«Ընկերներ» — կանչում ելինք — «մենք ամուր

ձուլված ենք.

Քոլոր լավագույններին, վոր կան, Կուսակցութունն է

կանչում»:

Մենք Կուսակցութունն ենք — անտառը մեր դրոշակ-

ների

Գորշ մասսայի ընթացքի առջևից է գնում —

Մենք Կուսակցութունն ենք՝ ծնունդը Լենինի,

Մենք բանվոր դասակարգի կուսակցութունն ենք

կազմում...

Բանտերում նստածները,

Նուչնիսկ նրանք, վորոնք տարիներ աջնտեղ ելին

մնում,

Նրանք էլ ցերեկ ու գիշեր

Մեզ հետ ելին գնում:

Մեր կուսակցութունը — ծանր քալով

Թևավորված գորշ մասսան է.

Մբտի տրոփուն, գորշ մասսայի ուղեղ —

Այդ նա՛ լի:

III

Հասան տարիներ, տարիներ, վորոնք խաղաղութուն

ելին կոչվում:

Վոսկին բանկերում դիզվում էր, սովորաբար:

Քաղքենին խնայողութամբ միջոցներ հավաքեց,

Գնում ելին նավեր և ըստ կարգի մեկնում գնացքներ

անդադար:

Քաղաքից քաղաք ձգվում ելին ավտոճամբաները,

Վեր ելին ցցված միլիոնավոր անտենաները,

Մարդիկ չհուզվելով բնավ՝

Շտապում ելին դեպի ստադիոն և ձիարշավ:

Հրապարակներում նվագում ելին որկեստրները,

Գարնան ուրախութունն էր քաղաքը,

Անցավ նուշնիսկ թախծի դիմակը —

Ինչպես շուտ մոռացան պատերազմի սարսափները:

Յերկինքը քաղաքի վրա

Լույծ կրակների բազմութունից վառվում էր,

Շանթը աղեղնաձև ծովում էր տներին վերևը,

Շատերը հավատում ելին, վոր աշխարհում խաղա-

ղություն ե...

Հասան տարիներ, տարիներ, վորոնք կոչվում ելին

խաղաղություն:

Բայց ումբացիները բիֆֆերի համար ստեղծում ելին

դժոխք:

Մըրիկ թուով Ասորական անապատի վրայով,

Յեվ թափեց թուշն:

Կանչերը, ինչպես հրացանների տրաքոցներ,

վորոտագին

Յերկինքն ելին գայլիկոնում —

Ելեկտրական աթուռի վրա Սակկո-Վանցետտին՝

Իրանց արչան մեջ չեփվելով՝ մահ ելին տեսնում:

Յեվ հեռավոր Կանտոնի վրա

Բարձրացավ տապար,

Քարյուղված մարդկանց

Դեպի խարուղկ ելին տանում՝ ալրերու համար:

Կոնվեյերը թռչում էր մինչդեռ,

Ֆանվորներին գորշ մասսան հազար գործ ունի...

Դահլիճն իր սաղավարտը պատից կախեց

Յեվ հագավ ցլիկներ հանդեսի:

IV

Յերը դու այս բանը կարդում ես, ընկեր,

Կամ թե այս խոսքերը ասում են քեզ,

Գիտցիր, ընկեր, այս ուղարկված է

Քեզ՝ աշխարհի ազգերից ներկաացուցիչ:

Յեվ մեռելների ձեռքերը, մեր մեռելների, դեպի քեզ

բարձրացված են՝

«Ընկեր»,

Յեվ պատի առաջ,

Վորը չերկնցն է և ավերված,

Վեր են կենում նրանք, վորոնք բոլորը որենքով ելին

սպանված:

Շանհայի բանվորները տանում են պլակատ:

«Ընկեր, խփիր ստորներին»,

Յեվ պրոլետարական Տեխասը

Նայում է քո դեմքին:

Կախված կամուրջների վրայով

Պափշիկներն են աշխուժ քայլում,

Բամբուկի կոթերի վրա

Գարմիր դրոշակն է ծածանվում:

Նրանք քո քայլերով առաջ են գնում,

Նրանք դուրս են գալիս խավարից:

Դու չերգում ես նրանցից, նրանք չերգում են քեզից:

«Կուսակցութիւնը մենք ենք: Մենք ենք
կուսակցութիւնը»:

V

Մենք վոչ թե միայն լսեցինք, մենք տեսանք բոլորը,
ինչ վոր Լենինն ասաց ամուրձ
Նրա խոսքերը — դա՛ Կարմիր բանակն է, դա՛
տոկունութիւնն է կնու,
Վոր Չախճախեց զբարատութիւնը, կեղծ բարեպաշ-
տութիւնը և խաւարը հոծ,
Նա ասաց իր խոսքը և մարմնացրեց նրան, դարձրեց
գործ:

Նրա աչքերը մեզ սովորեցրին նայել:
Մենք դիմակները տակ մարդկանց շատ դեմքեր լսվ
տեսանք:
Մենք լավ տեսանք դեմքերը զերերի, կուշտերի,
Յեւ մեր աչքերը քշեցին ինքնագոհութիւնը նրանց
ժպիտների:
Մեր աչքերը, վորոնք մոռացել էլին քունը անդորր,
Վորոնք, ինչպէս թնդանութների բերաններ, պարզ են
և հզոր —

Մեր աչքերը, վորոնք չերկրին հակում են հարատե,
Մեր աչքերը, վորոնք տեսնում են ամեն մի պատի
չտե,
Գործարանի սրահում, ուր աշխատում են մարդիկ՝
քրտնաթոր:

Մեր աչքերն են միշտ արթուն,
Մեր աչքերը թափառում են տնից տուն.
Մեր աչքերը՝ ժամանակի միջից՝ ամեն տեղ են
տեսնում:

Ահա կանգնած են զորքեր՝ պատրաստ ու կազմ.
Նորից ազգերին սպառնում է չտեսնված պատերազմ.
5000 մետր բարձրութեան վրա
Ռմբացիւրներ են պտույտ գործում.
Յերկինքը և չերկիրը դողում են
Պրոպելլերների մրրկից —

Պայթող ումբերը
Պողպատե կառուցներով
Պայթում են
Դեպի վար —
Այսպէս վերջացան խաղաղ խաղերը:

Ներքևում ող են թռչում ամբողջ քաղաքներ,
Տները ցիր-ցան են լինում.
Ասես վաչր ընկնող աստղեր՝
Ոգանավերը ցած են թափվում:
Գուղձերի մեջ ձեղքված՝
Քաղաքը տնքում է տանջանքներից,
Գազը քաղաքումն է փռված,
Քաղաքը խեղդից ծխից:

Մշուշոտ պուրակի չտե
Տանին է պայթում,
Ականային հարձակումներից
Մրրիկ գոչացավ ողում:

Գնացքը սլանում է,
Դիակներ կան ընկած նրա միջին,
Ռումբերի կտորները վոլորվում են
Յերկնքից մինչև գետին: —

Անն ժամանակ Կուսակցութիւնը չերկարեց իր ձեռքը,
 Քաղմամբ իրոն ձեռքը,
 Յեզ քաղաքներում
 Դրեց գործարանների դարբանների ձակատին.
 «Իրո՞՞ր բանվորներին, բո՞ւր ազգերին»:

Կուսակցութիւնն իր բերանը բացեց բոլոր անկյուն-
 անկյուններում,

Հրապարակներում և գլուղերում —

Յեզ մի ձեռք

Նետում և թերթերն ամպի տակ:

Ասես արմատներ, վորոնք գետինն են պատել —

Կուսակցութեան խոսքը

Հզոր կերպով տոնում և հաղթանակ.

Կոնվեյերի, արորի, շոգեկաթասլի առջև

Ամեն մեկը նրա կամքն զգաց:

Միտքը ծակեց ամեն մեկի ուղեղը,

Յեզ վճիռն իսկույն ծնվեց տեղն ու տեղը. —

Յեզ կուսակցութիւնը բոլորին կանչում և ժողովի գալ.

«Մինչև աչժամ — այսպէս: Բայց չեա — վո՞չ մի քայլ»:

Աչժամ անազանքը չի ոգնի,

Զլունագունդը թռչում և,

Պրոլետարները հառաչ են մղվում աղմկոտ փողոցում.

«Մոտքը պատկանում և Կուսակցութեան: Կուսակցու-

թիւնը պիտի խոսի»:

Կուսակցութիւնը՝ ահա անակնկալ՝ գաղտնի գործու-

նեցութեան և մատնված,

Կուսակցութիւնը՝ թմբուկի ուժգին հարված և.

Մենք կոչնչացնենք արշիւքները հիմնովին.

Մենք կզտնենք մոմի պես գեղնած սպանիչներին:

Յեզ լերը պետական շենքերի այրվելը վերջացաւ,
 Մեզ համար վառվեց հրեղեն լերկինք:
 Դրոշը, կարմիր դրոշը, վոր մենք կրում ելինք —
 Վեր սլացալ:

Յեզ վայրենի լեռնցիները, ուշաթափվելով, գետնափո-
 րերի մոտ,
 Յեզ կարավանը անապատների մեջ, և ծովագնացը՝
 արդեն
 Տեսան, թե ինչպես քամուց ծածուկում և արևոտ

Ողում գրոշը հրեղեն —

Միլիոնաձեռ ձեռքում կարմիր դրոշը
 Անտառների և ծովերի վրա:

2888
 1006
 28693



ԱՇԽԱՐՀՆԵՐ ԲԱՑՈՂԸ

Մի կիրակի, փոշոտ քարտեզը պահարանից վերցրի
Յեզ՝ ծնկներին վրա դրած՝ չերփներանգ եջերը թերթել
սկսեցի:

Գտա իմ քաղաքը, և՛ մատս սահեցնելով՝
Անցա անձանոթ չերկրների չերկաթե և ջրե ուղիներով:

Իմ մատը սահում եր ամեն ուղղությամբ, անապատ-
ների անսահման

Նա անցավ, և իջնում եր մինչև գետաբերան,
Վեր եր դիմում, ցած եր գալիս՝ հովիտը խոր
Յեզ նորից թաղվում ավազներում արևոլոր:

Նախնական անտառն ե իմ մատն իջել
Յեզ լես՝ ասես չերազում՝ խոնարհվել եմ ու մնչել,
Թափառականը կորել ե նախնական անտառում,
Յեզ ավեր կորել ե սաղարթի խավարում:

Պարուկի լուսով՝ վայրենիներն ելին պարում աջնտեղ
Յեզ իրանց թմբուլներին զարնում թափով զորեզ:
Անհայտ անը նրանք համարում ելին աստված,
Նրան տաճարեր ելին շինում՝ զգացված:

Յեզ պատահեցին մեզ քաղաքներ. նրանցից
Մի քանիսն իրանց անունով ծանոթ ելին ինձ,
Ուրիշների մեջ՝ տեղում եր հորդառատ անձրև,
Ել ուրիշներում շինքերն եր շիկացրել տոթազին արևը:

Յեզ անա՛ գործադուլ ե Պիկետներ, պոչեր,
Իսկ վոստիկանության ձեռքին՝ փայտեր, գնդակներ,
Ավելի հեռու՝ բանտեր, և մեկն՝ աշկարա
Մարած՝ կծկվել ե ելեկտրական աթոռի վրա:

Չինաստանում տեսա գլուխների կույտեր անքանակ,
Վորոնք քարշ ելին գալիս զինվորների վոտքերի տակ,
Կամ բարձրացված ելին, ինչպես վայրենի վորսեր,
Հեռագրական սլուռների վրա, տներից վեր:

Յեզ ինձ թվաց, վոր իմ գլուխն ըմբոստ
Գլորվեց մյուսների և նմանների մոտ,
Յեզ մեռելի աչքերը վրաս են նայում հեղ,
Յեզ իմ աչքերը նայում են նույնպես:

Յես նավ նստեցի և արևն արդեն
Ինձ տանում ե՛ սուր կուզե,
Ճոճվում ե սենյակը, քարտեզն ե իմ ձեռքում, —
Յես սաստիկ արեկոծություն եմ զգում:

Ահա խորագիր. «Յեվրոպա»: Ռազմի վրն լե իմ մատը...
Յես գտա Վերդենը, անա Մարնը, —
Յես անհանգստացնում եմ վերքս հին
Հիշողությամբ ամխահոտային:

Իմ քարտեզը նորից դնում եմ պահարան:
Թող մնա: Ե՛լ նա ինձ չե պետքական,
Յեզ այս աշխարհում լողալուց հոգնելով սաստկապես՝
Դառն թուչն ճաշակեցի լես:

Յեզ անա մի անգամ ժողովից հետո...
Յես չհավատացի, վոր այդ չերազ չե:

Մենք՝ քսան հոգի, վճռեցինք չլինել,
Յեվ չես այդ ցուցակի մեջ եմ մտցված:

Վարչական անցանք: Յերեկոյան դեմ հասանք
սահմանին,

Յեվ լուռ ե վազոնում, Չկան հանաքներ ցանցառ:
Փշոտ ցանկապատ, Զինվորներ սաղավարաններով,
Կայարանում — Լենինի պատկերը պաշտոն:

Ուղում ելինք ասել, թե ինչ՝ չգիտեցինք:
Անգորարար բացինք բերան:
Այդպես՝ ցնորքներում արթնանում ե քնածը
Յեվ գալիք կյանքում ճանաչում իրան:

Հինգ որ՝ գեղեր-ցերեկ՝ մեզ վազոնները տարան,
Կասպից ծովը, այն այնտեղ ե՛ լուսամուտի առաջ,
Յեվ տափաստանը լուսավորում եր լուսինը կանաչ,
Վոր բարձրացել եր լուսան կատարին:

Բաքվի վիշկաները և նավթի շատրվանները
Յեվ չերկինք քերոզ տունը Խարկովում
Տեսանք, և հին գլուղի մեջ
Տեսանք՝ կուլակներին հետ ինչպես եր կռիվը մղվում:

Մենք լսեցինք՝ չերկիրը բարձրացնող
Յերկաթե մեքենաների սչան քայլվածքն անկենդան,
Յեվ սիրա — մոտորը թմբուկի պես եր աղմկում,
Փորելով դաշտերի կորդերն անասնման:

Դոնի ավազանում շեղջով՝ սև, վիթխար՝
Բարձր ու մեծ հնոցներում ածուխն եր բոցկլտում
անմար.

Բարձրացնող մեքենաները աշխատում ելին համառ.
հնչում,

Յեվ շիկնած պողպատը վեր եր թռչում:

Յեվ նորից իջավ չերեկո: Յեվ մենք այնտեղից սրաթե
Թռչում ելինք դեպի առաջ՝ կեչու պուրակից վերև:
Իսկ առավոտյան տեսանք անապատը, ուղտեր
Յեվ ուխտերի հյուսվածքը պողպատե:

Հիշում եմ Թիֆլիսը: Ինչպես աստղոտ չերկինք՝
Փռված ե քաղաքը գլշերային վարազուլրի տակ:
Միտինդում մենք դիմեցինք
Կարմիր զինվորներին և բանվորներին անքանակ:

Այդտեղ չես տեսա մեկին: Նա կրում եր այն ժամանակ,
Ինչպես չես՝ կեպի և գորշ պիջակ.
Յես հանդիպեցի նրան և պահպանեցի հավիտյան
Նրա խոսքերը հազարաբերանյա:

Հետո չես տեսա նրան Կրեմլի մոտ այն պահին,
Յերբ հարյուր հազարավորներ շարժվում, վխտում ելին,
Իսկ նա նայում եր բոլորի վրա և վողջունում մեզ,
Յեվ սեղմում եր մեր ձեռքը: Այդ Լենինն եր, գիտե՞ս...

Այդպես՝ չես նոր աշխարհ տեսա, չես բացի նրան,
Բացի ինքս ինձ — Գասասյի միջև և մասսայում,
Աշխարհից աշխարհ կոչ նետվեց ուժգին
Բոլոր ազգերի բանվոր դասակարգին:

Իմ քայլը՝ գորշ շարքերի քայլվածքն ե,
Կյանքը մրրիկով, հոգմով ընդգրկված ե:

Ինչպէս հաճախ յես լսում եմ գիշերվա լուսթշան միջին
Թմբուկի հարվածը կոչալին:

Քարտեզից վեր եմ բարձրացնում հայացքս խորախոր-
հուրդ:

Վեր կաց, կեղեքված ժողովուրդ.

Դեպի մեզ են կարկառված մեզ կանչողների ձեռքերը
Յե՛վ փողփողում են մեր դրոշները:

Ռեւերտով, ջրալին մեծ ուղիներով մենք կանցնենք,

Մենք լեռնաշղթաների վրայից կթռչենք,

Յե՛վ վաչրենի արևը մեզ կհեղեղե իր հրով,

Կարմիր դրոշը վողջունելով:

Մ Ե Բ Մ Ա Ր Տ Ա Կ Ո Ջ Ը

I

Մենք ուղամաճակատում գազ շատ շնչեցինք.

Իսկ այստեղ՝

Մեր աղիքները տաքացած են կաղամբով և շաղգամով:

Զինվորների մարմիններով պարարտացված ե հողը:

Յուզուս գետնախնձոր ե բսում լեղրալրական գերեզ-
մանների վրա:

Վերադարձանք

Ցնցոտիներով.

Փողոցի մածուցիկ ցեխով ծածկված,

Զինվորի դորշ զգեստում՝

Արշունով և քրտինքով թաթախված,

Մանանեխի գուլն ստացած:

Մեզ հյուրասիրեցին գնդակներով,

Յերբ մենք հայրենիքից շնորհակալութուն խնդրեցինք:

Իբրև ճակատալիներ:

II

Ուրագանի տակ: Արշան լճեր:

Գեհենի միջից մենք հարձակում ելինք գործում:

Մենք սովորում ելինք

Ռումբերի և գնդացիլրների հետ վարվել:

Պողպատե սաղավարտները մխվում ելին մեր գանգերի

Յեզ մեր գանգերը շրդեղվում ելին:
Դժոխքը մեզ ալլես չե վախեցնում:
Յեզ փշոտ չերկաթաթելը՝ ելեկտրական հոսանքով՝
Մեզ չե սարսափեցնում:

III

Անհայտ զինվորներ —
Այժմ քաղաքացիական շորեր հագած,
Բանվորի բլուզներ,
Գործարաններում և հանքահորերում,
Գետնի վրա և գետնի տակ —
Դուք՝ առանց անվան,
Վոր կոչվում եք՝ ինչպես պատահի,
Վորովհետև անունն այս գեղքում անտեղի չե
Յեզ բան չե նշանակում:
Լոկ ան գին ունի,
Վոր դու, ընկեր, հասկացար,
Վոր չես ել, դու յեւ մի հնք,
Մի կարիք,
Մի ճարտարություն,
Մի տեմպ —
Յեզ նույն մահը, և նույն ստրկությունը —
Այն, վոր դու հասկացար, ընկեր,
Դու և լես,
Այն, վոր մենք դրա համար կովում ենք
Յեզ գործարաններում, և՛ հանքահորերում,
Գետնի վրա և գետնի տակ —
Յեզ ամբողջ բանվորական ճակատում:

IV

Սրեցեք ականջներդ.
Լայն բացեք աչքերդ.
Ամեն մեկը, վոր ապրում ե մի խուլ անկյունում,
Պետք ե տեսնե, լսե:
Ռազմի ուղանավերի տորմիղը ովկրանոսի վրա չե —
Քիմիական տրեսաններում հուզմո՞ւնք ե:
Վերջացավ խաղաղությունը, վորը խաղաղություն
չեւ ել,
Վերջացավ խաղաղությունը, վորը հովանի չեւ
Չինաստանին,
Վորը սպանում եր ընդհանրին Մարոկկոյում և
Սիրիայում,
Վերջացավ Նիկարագուայի և Ճավայի խաղաղությունը.
Վերջացավ խաղաղությունը, վոր կախաղաններ բերեց
Բուլղարիային,
Վերջացավ ելեկտրական աթոռի խաղաղությունը,
Վերջացավ ամերիկական բանտի խաղաղությունը,
Ռումինիայի, Վենգրիայի, Լեհաստանի բանտային
խաղաղությունը խախտված ե —
Վերջացավ իսկական հրեշտակային խաղաղությունը՝
Մեծ Բրիտանիայի խաղաղությունը,
Հնդկաստանի խաղաղությունը,
Անգարթ, խաղաղ քունը գաղութներում —
Վերջացավ Գերմանիայի խաղաղությունը,
Տաժանակիր խաղաղությունը, Դառնայի խաղաղու-
թյունը, կոնվեյերի խաղաղությունը,
Այն խաղաղությունը, վոր պետք ե պատվելին
անգործներն ել, —
Վերջացավ Ազգերի Լիգայի խաղաղությունը, վոսկե
խաղաղությունը

Հիմար հեքիաթը...

Յեվ անա այժմ — փողեր են ածում,

Յեվ անա այժմ — թմբուկներ են հարում,

Փողի ձայն և հրացանաձգութուն,

Գործարանների շշակների ձայներ

Յեվ աղաղակներ

Յեվ պլակատներ, թերթեր և լողունգներ,

Ովկիանոսի անց կողմում և անց.

Աշխարհը ցնցվում է Լենինի քայլերից:

Քայլերի արձագանքը և՛ Գերմանիայումն է,

Յեվ Ուելսի ընդերկրյա հանքահորերում,

Յեվ Դեղին գետի վերն ու վարը —

Նա գնում է —

Անցնում ծովեր, գետեր,

Հենվում անտառների վերև՝ ինչպես հուր,

Ամպի պես շնչում Հիմալայների վերև, —

Ամեն տեղ գնում է նա:

Նա մասսաներն է՝

Հզոր,

Անաստեղի:

Հ Ա Չ Ա Ր Ա Մ Յ Ա Լ Ե Ն Ի Ն Ը

Հազարավոր տարիներ կալանան, կանցնեն,

Բայց միշտ, ինչպես այժմ,

Պիտի կրկնեն անունը՝

Լենին:

Հարյուրավոր հազար լենինյան անկյուններից

Ծնվում է նոր աշխարհը:

Հազարավոր տարիներ կալանան, կանցնեն,

Յեվ աշխարհի բոլոր կրեմլների վերև

Կծածանվի կարմիր դրոշը՝

Լուսավորված հարյուրավոր կրակներով:

Հազարավոր տարիներ կալանան, կանցնեն,

Յեվ վոչ ոք չի հիշի նրանց անունները,

Վորոնք մի բանով հռչակվել են.

Նրանց կմոռանան և՛ գրքերում, և՛ ավանդութուն-
ներում:

Միայն Լենինին ամենքը կգիտենան,

Ինչպես կենսական խոսք կկրկնեն նրա անունը —

Յեվ, կարմիր դրոշակների անտառով՝ կտանեն

Աշխարհի միջից:

Հազարավոր տարիներ կալանան, կանցնեն,

Բայց նա կանցնի բոլոր ժամանակներից, սերունդներից,

Նա կծլի —

Ինչպես մի ծառ անհուն՝ ճյուղավոր,

Վորի արմատները գնում են գետնի տակ

Բոլոր ուղղությամբ.

Հազարամյա Լենինը:

«Ը Ն Կ Ե Ր»

Յես կարող ելի ապրել
Տափակ հարկով մի տան մեջ՝
Ամբողջ ճակատին — պատշգամբ:
Յես կապրելի նրա մեջ՝
Ցնորքներին անձնատուր լեղած
Յեկ գրելով բանաստեղծութուններ,
Վորոնց մասին ասում են.
«Այս հավերժության համար ե»:

Յես կզառնայի «մեծ բանաստեղծ»,
Ինձ պետք չէր լինի
Անհանգստանալ սպանութունների պատճառով.
Վորոնք սեղի չեն ունենում ուր Վոր ե:
Յերեկոները
Բարակ մատներով կինը
Կնվազեր ինձ համար Բախի լեղանակներ,
Յեկ սենյակն իմ շուրջը
Կդողանջեր,
Ինչպես տաճարի գմբեթ:

Յես կերգելի ժամանակներին և չերկրներին մասին,
Վորոնք նման են հավիտենական կիրակիին,
Յես կերգելի մարդկանց մասին, դեմքերը՝ նման
բաժակներին,
Վորոնց խորքում ծիծաղն ե խաղում:

Յես բարձրացա հարյուրավոր լեռներ,
Յես անցա հարյուրավոր հովիտներ:
Քաղաքները կլանում ելին ինձ
Յեկ չեմ ելին թքում:
Յես զարմացած կանգնում ելի լերեկոներին մթին
ազմուկներում:

Ապակյա խանութներում
Վեր ու վար ելին սահում
Լիֆտերը *)
Կուրացնելով՝ պտտվում ելին իմ շուրջը
Գուլնդգուլն
Փայլող գնդեր:

Իմ աչքերը նայում ելին իմ աչքերին մեջ,
Իմ շրթունքները հարցնում ելին իմ շրթունքներին.
«Ի՞նչ անել»:

Յերկար ժամանակ
Յես անպատասխան ելի մեում,
Բայց 1914 թվականը
Պատուեց չերկրի չերակը
Յեկ դուրս նետեց ինձ համար
Պատասխան:
Լմվ.
Այժմ չես իմացա իմ բանը:

Գալարվելով սեփական արշան լճում,
Սողաց ինձ մոտ
Մի հակա —
Զինվոր:

*) Վերելակ

Նա ծնկներն լրա քարը եր գալիս իմ ուղղությամբ,
Քարը տալով իր լեռերից

Անվերջ՝ արյունոտ դրոշակը:

Յեվ նրա վերջին հառաչը

Ինձ թափանցեց

Մի խոսքով՝

«Ընկեր»:

Ասես սենտզենյան հայացքով

Յես տեսա

Ամբողջ աշխարհի փտությունը:

Յեվ լես դեն նետեցի իմ անունը:

Ինձ կոչում են «Ընկեր».

Յես կանգնեցի

Կոմիտերնի կարմիր դրոշակի տակ:

ՅԵՍ ՅԵՐԳՈՒՄ ԵՍ ՀՆԳԱՄՅԱԿԸ

Հնգամյակը, համաշխարհային պրոլետարիատի —
կապիտալի վրա ուղղած հարձակման ամենակա-
րեվոր մասն է. դա խելագետ կապիտալիստական
ստաբիլիզացիայի կործանման ծրագիրն է — հա-
մաշխարհային հեղափոխության սեծ ծրագիրը:

Պոետներ ունեցին բուրգերը:

Սաղմոսերգուհիները չերգում ելին աստծուն:

Ռազմերի արձագանքները գոռում են վոտանավորնե-
րում, և ամենափախնքոտ արքայիկը

Իր չերգիչներն է դա՛նում:

Հոմերոսը ժպտում է. այժմ ել դեռ,

Յեռանդով վանկերը շեշտելով,

Կրկնում են խմբով

Գիմնագիտները

Աքիլլեսի հերոսական կռիվների մասին:

Աշխարհի բոլոր բարբառներով

Յերգված է սերը...

Բայց լրացան ժամանակամիջոցները,

Վերջացավ արքաների և քահանաների ժամանակը:

Համաշխարհային պատերազմի պողպատե ուրագան-
ներին

Ըմբոստ վեր կացավ մի նոր ցեղ —

Բ ո լ շ ե վ ի կ ն ե ը Ը:

Հսկայապետ անեց
Կրեմլի գմբեթներից վերև

Լ Ե Ն Ի Ն Ը —

Յեզ տանում ե իր լեռների բանվորները համաշխարհային ապստամբութունը:
Բուրժուազիստ ճնշող լրագրից, ճշում ե. «խեղագար»,
«Լենին» կրկնում ե բանվորը, և խոսքը հնչում ե. —
«վերջապես»:

Աշխարհը զուգվում ե նոր ծաղկումով: Յամաքի
վեցերորդ մասը ծածկվեց կարմիրով:

Արևելքի վերև լերկնքում
Շրկացած մետաղի նման
Յեղնում են տառեր՝

Խ Ս Հ Մ:

Լենին —

Բոլշևիկների կուսակցություն —

Կարմիր բանակ —

Կոմիտեներն —

Նոր պոետները լեն սպասում

Այս խոսքերը:

Լեոնային անկոխ ձյուններից բարձր են

Այս խոսքերը,

Բոլոր անապատներից, գաշտներից լայն են,

Հիմալայան բոլոր բարձունքներից վեր են,

Բոլոր տաճարների գոթական զարդարանքներից
հանդիսավոր են,

Ավելի գեղեցիկ են, քան թե Րիո-ժանեյրոյի վրա

փալտոգ արևը,

Ավելի խոր են, քան խորքերն ովկյանի

Նրա ամենախոր տեղում:

Իսկ լերը մեռավ Լենինը,

Նրան հուզարկավոր լեզան միլիոնավոր մարդիկ,

Նրան թաղեցին միլիոնավոր բանվորներ, միլիոնավոր
գյուղացիներ,

Միլիոնավոր մարդիկ պահեցին նրան իրանց արջան
ու մարմնի մեջ:

Ամեն ոք նրանց հետ վեր ե կենում Լենինը, գնում ե
աշխատելու:

Նայիր շորիս: Մի գորշ պիջակ ե: Դա՛ Լենինի գորշ
պիջակն ե:

Լսիր խոսքս: Մեծ խոսք ե նա: Լենինի հզոր խոսքն ե:
Լենինի ձեռագրով լեղնում են տառեր Արևելքի վերևը՝
լերկնքում:

Հ ն գ ա մ յ ա կ:

«Հնգամյակ» — աշխարհի բոլոր հինգ մասերին հաղորդում ե Մոսկվայի ռադիոկայարանը 1481,5 պիքով:

«Հնգամյակ» — բոլոր սյուներով վռնում են բուրժուական ժողովուրդների հողմածները:

«Հնգամյակ» — հառաչում ե պսալը ժամասացության միջոցին և քարոզում ե խաչակիր արշավանք:

«Հնգամյակ» — ահա աշխարհի բոլոր կոմիտեների ժողովների նյութը:

«Հնգամյակը չորս տարում» — հայտարարում ե Կալինինը ՀԿԿ(բ)-ի XVI համագումարում՝

իր վերջնական խոսքում:

Սըր Դեմոկրատները խորհրդակցում ե արգյունարբության մազնասանների և գեներալների հետ:

Հ ն գ ա մ յ ա կ:

Սերաֆիմովիչը գրում է «Յերկաթե հեղեղատը», քա-
ղաքացիական կռիւի դժուարացներգութիւնը:
Մայակովսկին վոտքի չե հանում 150 միլիոններին,
վոր չերգվեն հեղափոխութեանս:
Հանգերը և ազատ վանկերը Լենինին հարգանք են
մատուցում:
Համառ կերպով
Ատամները խրելով
Նեպի շրջանի հարցերի մեջ՝
Կովեցին պրոլետարական պոետները հեղափոխութեան
համար
Խոսքի գինքով...
Բազմաթիւ մեծ գործեր չերգել են մեղանից առաջ
բոլոր ժամանակների պոետները,
Բայց ամենամեծը մեզ մնաց չերգելու.
Յես չերգում եմ հնգամյակը:
Յես նվիրում եմ իմ վոտանավորը ամբողջ աշխարհի
բանվորներին և գլուղացիներին,
Յես հուզում եմ նրանց չերգով, կանչում նրանց.
պատրաստ չեղեք
Պաշտպանելու ձեր հայրենիքը՝ Սորերդային Միու-
թիւնը:
Գաղտագողի մոտենում է պատերազմը՝ խաղաղ
ժպիտի դիմակով:
«Սորերդային Միութեան հետ, թե՛ ընդդէմ» — այս
հարցը դես-դեն է շարտում մարդկանց, ինչպես
ուժանակ,
Այս հարցը ինչպես կրաշաղախ, ամբոցնում է նրանց
անբաժան կերպով:
Յես նվիրում եմ իմ վոտանավորը բոլոր հեղափոխու-
թեան համար զնդակահարվածներին և բանտ
նետվածներին:

Նրանց արլունով ամբանում է այն ուղին, վորով
մենք քալում ենք:
Մտածեցեք. ահա այժմ ել, հենց այս պահիս,
Ձեր ընկերներից հազարավորները հաշմանդամ են լի-
նում սպիտակ զորականների դահիճներից:
Այժմ հենց այս րոպեիս, ձեր ընկերներից մեկն անց-
նում է վերջին ուղին —
Մհա. նրան կանգնեցնում են պատի մոտ, վորը դեռ
չէ չորացել գնդակահարվածների արյունից:
Յես նվիրում եմ իմ վոտանավորը խորհրդային բոլոր
ճարտարապետներին և քիմիկոսներին,
Կոլտնտեսականներին, ելեկտրոտեխնիկներին, հողա-
գետներին, տրակտորաշեններին,
Մոցիալիստական մրցման բոլոր մասնակցողներին,
Հարվածայիններին, կարմիր վերատեսուչներին.
Հաշվելով,
Չափելով հողամասերը,
Աշխատելով կարկինով և մատիտով,
Հողաչափական գործիքով,
Մոտորները փորձելով —
Գուք բոլորդ ստեղծում եք այն գործը, վոր
Լենինի գործն է:
Իմ վոտանավորը — Կարմիր բանակին.
Տնծագին վոլորվում են իմ վանկերը պրոպեղներների,
սվինների, հրացանների շուրջը:
Յերգակցելով կարմիր-բանակային չերգերին,
Ձեզ հետ թոչում է իմ վոտանավորը քաղաքների
փողոցներով,
Ձեզ հետ հսկում է, ձեզ հետ զրուցում զորանոց-
ներում...

Յես նվիրում եմ իմ վոտանավորը բոլոր լերկրների
կամկուսների ընկերներին.

Թող նա ոգնե՛ ձեզ՝ քշելու ձեր սրտերից հողնածու-
թյան վերջին սավերը,
Թող տա ավելի հավատ՝ հաղթանակների, ավելի
հպարտություն

Այն բանի, վոր դուք ընկերներ եք,
Անդամներ III Ինտերնացիոնալի,
Համաշխարհային Կոմունիստական Կուսակցության,
Կոմիտեներն...

Յես նվիրում եմ իմ վոտանավորը ընկերներին —
ՀԿԿ(Բ)-ի անդամներին,


Քեզ, ընկեր Ստանլին:
Իմ վոտանավորը վեր ե թուչում դեպի կարմիր դրոշը,
վոր վառվում ե կրեմլի վերեք —

XVI կուսհամագումարի ներկայացուցիչները վեր են
կենում և լերգում Ինտերնացիոնալ-
Դեկավարման միություն.
Կուսակցական շարքերի սերտացում.
Ամճւր ե
Պրոլետարական դիկտատուրան:

Յես լերգում եմ Հնգամյակը,
Յես լերգում եմ այն աշխատանքը, վորն ազատում ե
ճորտանալուց

Փողովուրդներին:

Հինգ
Տարին
Ծնցում ե
Աշխարհը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0169932

3968

4412 18 4.
44202 7 4



ԻՕԱՆՆԵՍ Ր. ԲԵՒԵՐ
ՏԵՄԵՐԱՆԻ ՏԻՒՒԿՆԵՐԻ
ԳԻՅ. ՍՏՐԱ ԶՐԻՎԱՆ 1984

83

Դ-44